

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական գրասանքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՎԻԹԻՆ. Մամուլ. Հասարակական հոսանք-
ներ. Օպերային ներկայացումները. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՎԻԹԻՆ. Հարա-
ափրկական պատերազմը. Միջազգային կոնգ-
րէսը Պարիզում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
Գ ԿՐԵՆԸ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Սով տարին.

ԿՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐ

Այս ամառ մի քանի դպրոցներ փորձե-
ցին իրանց սաներին պահել գիւղական
շրջանում և կատարել նրանց հետ մի
շուրջ գրասանքները շրջակայ տեղերում:
Այդ գրասանքները տալիս են շատ լաւ
հետեւանքներ, որովհետեւ աշակերտները
ծանօթանում են մի կողմից բնութեան
հետ, միւս կողմից գիւղական ազգաբնա-
կութեան կեանքի հետ:

Դպրոցական կրթութիւնը, որքան և
առատ կերպով օգտվում լինի դասական
լատինական պարագաներից, այնու ամենայ-
նիւ անկարող է փոխարինել այն անմիջա-
կան ապագորութիւնը, որ գործում են ի-
րական կեանքը և բնութիւնը իրանց
ընկերների: Դասարանի մէջ ցոյց տուած
ընթացքները կրում է մի տեսակ արհես-
տական բնագործիւն և այդ պատճա-
ռով նա կարող է նոր իւրացման իր հա-
կան պայմանների մէջ:

Դպրոցական գրասանքները սակայն կա-
տար իրական օգուտ բերել այն ժամա-
նակ, երբ նրանց կազմակերպողները և
յեկավարները ունեն որոշ պատրաստու-
թիւն այդ գործի համար: Զբոսանքի ղե-
կավարողը ինքը պէտք է լաւ ճանաչէ բը-
նութիւնը եւ նրա երևութիւնները, ճիշդ
գիտութեամբ ունենայ գիւղական կեանքի
և նրա առանձնատկութիւնների մասին, որ-
պէս զի թէ կարող լինի բաւարարութիւն
տալ աշակերտների հետաքրքրութեան և
պատասխանել նրանց տուած հարցերին և
իւր ինքն իր կողմից հնար ունենայ ա-
նախդիւն նրանց համակարգված գործնա-
կան մի դաս այն բոլորի մասին, որ տալիս
է գրասանքը: Աշակերտները միջոցով, օրի-

նակ, կարելի է բոլորի, կենդանիների,
հանքերի և քարերի ժողովածուներ կազ-
մել. սակայն այդ գործը պէտք է առաջ
տանել հմտութեամբ, չը ձանձրացնելով
աշակերտներին և հաղորդելով նրանց ար-
դարեւ պիտանացու և ճիշդ տեղեկու-
թիւններ ժողոված առարկաների մասին:
Առանց այդպիսի պատրաստութեան,
առանց նպատակաւորման կազմակերպու-
թեան, դպրոցական գրասանքները անկա-
տար կը լինեն և չեն տալ աշակերտներին
այն օգուտը, ինչ որ նրանցից սպասվում է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՎԻԹԻՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Նորից հարց է դրված—կարող է հասարա-
կութիւնը խառնվել գործիչի մասնաւոր կեանքի
մէջ: Բոլորով անուշով մի երգիչ խաբել եւ
բռնաբարել է մի աղվկայ. այդ գործից յետոյ,
երբ նա երեւաց Աստորիանի բնակում, հասա-
րակութեան միջից լավցին սուղոցներ. չուաց-
նում էին ոչ թէ այն պատճառով, որ Բոլորով
լաւ չէր երգում, այլ որովհետեւ նա բնակի-
ցուր կատարել էր մի գործ, որ բարոյական
ծանր յանցանք է: Հասարակական այդ ցոյցին
պատասխանեց արտիստը բնակի, սակով թէ
ոչ ոք իրաւունք չունի խառնվելու իր մասնա-
ւոր գործի մէջ: Ահա այդ պատասխանը բա-
նակուի առիթ է դառնում ուսաց մամուլի մէջ:
Իրաւունք ունէր պատմված արտիստը այդպէս
դատելու: «Съвер. Журьеръ» լրագրի խմբագիր
Բարեխաղիսի առում է, թէ ունէր, բնակ վրա
արտիստը գովասանական կամ պարաստողական
ցոյցերի կարող է արժանանալ միմիայն իր
խաղով, իր երգով. թատրոնում հասարակու-
թիւնը իրաւունք չունի մտածելու, թէ ինչ է
կատարել արտիստը դրուած Բայց դա, ի հար-
կէ, չէ նշանակում թէ նրա կատարած կեղտոտ
գործերը պիտի անպատիժ մնան. ոչ, հասարա-
կութիւնը իրաւունք ունի յայտնելու. նրան իր
գոգոնութիւնն ու գոգոնքը, բայց ոչ թէ
թատրոնում, այլ դրուած, մասնաւոր կեանքի
մէջ: Միւս լրագրիները, ընդհակառակն, պն-
դում են, որ հասարակութիւնը հենց թատրոնի
մէջ իրաւունք ունէր պատմելու յանցանք
արտիստին: Այսպէս, Ա. Սուվորին իրաւացի

կերպով նկատում է «Новое Время»-ի մէջ,
որ եթէ արտիստը իր մասնաւոր կեանքում
մի գեղեցիկ գործ կատարած լինէր եւ դրա
համար թատրոնում հասարակութիւնը համա-
կական ցոյցեր անէր, նա չէր բողոքի, սակով
թէ դա իմ մասնաւոր կեանքի մի գործ է:
Հետեւաբար նա նոյնպէս իրաւունք չունի բո-
ղոքելու, երբ հրապարակով նրա մի վատ գործն
է պախարակվում: Դերասանը, երգիչը հասա-
րակական գործիչներ են, իսկ հասարակական
գործիչի կեանքը հրապարակական դատի կա-
րէի է ենթարկել յայտնի դէպքերում, երբ այդ
դէպքերը չօղափում են հասարակական շահեր
ու հարցեր:

Թատրոնը արուեստի տաճար չէ լոկ ա-
րուեստի համար, ինչպէս գրականութիւնը
արուեստ չէ լոկ արուեստի համար:
Արուեստի մէջ մտնում են համոզ-
մունքներ, մտնում են բարոյականու-
թիւն, զարգացման օրէնքներ, կուսակցու-
թիւնների ընդհարումներ, կուս. կեանքի նոր
սկզբունքների համար Զարգացած հասարա-
կութեան համար մի եւ նոյն չէ, թէ ինչ է
կատարվում եւ ինչպէս է կատարվում իր
չորհրդով, ով է կանգնած նրա առաջ, ինչպիսի
ընթացք է պաշտօն կատարում: Քանի որ դե-
րասանը հասարակական գործիչ է—իսկ եւ
միայն այս հիմքի վրա եւ դէմ այն առա-
ցումներին, թէ «արտիստի մասնաւոր
կեանքը չէ վերաբերվում հասարակութեան»
—նա մտնել է հասարակութեան, նա միշտ
համարվում է հասարակութեան անդամ, թէ
բնակ վրա եւ թէ բնակից դուրս: Եթէ նա
բնակից դուրս կատարել է մի գոգոնի յան-
ցանք հասարակութեան դէմ, եթէ բնակից
դուրս նա ոտի տակ է տուել բարոյականու-
թեան ամենամաքնական կանոնները, նա
պատասխանատու է դրա համար եւ բնակ
վրա: Եթէ դերասանը հասարակական գործիչ
չէ, եթէ նա մի պարզ բեմադրող է, խաղա-
ցող, որ ընդունակ է զանազան դիմախիւ
ծածկել, ուստի եւ զրկված է պատիւի զգաց-
մունքից այն բոլոր հագուստների մէջ, որ
նա փոխում է, կատարելով դերեր, սկսած
Ստեփանի եւ վերջացած կրեյնիսկով, եթէ
դա մի մարդ է, որ բոլորովին խառնվել ու
չփոփվել է իր խաղացած դերերի մէջ, այն
ժամանակ նրա մասին խօսել էլ չարժէ:

Եւ վերջապէս, ինչպէս կարելի է, որ հան-
դիսանքը, թատրոնում ոգեւորված ծափահա-
րելով յանցանք արտիստին, այնուհետեւ դուրս
գալ ու փողոցում նրան իր գոգոնքը յայտնէ:
Այդ տեսակ երկուորութիւն չէ կարող լինել
մարդու մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎ ՏԱՐԻՆ

(Յիւլիանական կեանքից)

Եւիո Ռոյսեմի

Կարելիա նահանգի հիւսիսային մասում, Կալ-
նու եւ ուսաց սահմանի միջեւ, ընկած խուլ,
լայց գեղանկար վայրերում «ժառուր ալիւր»
կամ «անխառ հացը» դեռ ոչ հետեւ անցեալնե-
րում հազուադիւրս բան էր համարվում նոյն
իսկ ամենահարուստ գիւղացու տեղանի վրա:
Երեսուն տարի սրանից առաջ Կուսոստի փոք-
րիկ գիւղում այդպիսի հացի գործածելը կը հա-
մարէին անասունած չաղութիւն նախախնա-
մութեան բարիքների, եթէ տեղական բնակիչ-
ներից մէկը տարին տասներկու ամիս իրան
թող տար «անխառ հաց» ուտել: Ասեմք ոչ
ոք իրան թող չէր տալիս մի այդպիսի բան
անել, առաւել եւս Պերտուն իր բնատիրէրով:
Այդ Պերտուն երիտասարդ հասակում այն-
քան անմիտ էր, որ ցանկացաւ իր սեփական
հողն ունենալ, ուստի ազգաբալ չինց Սամա-
լաւայի աւագոտ ավիւտ, այնտեղ, որտեղից ար-
դէն սկսվում է իսկական խիտ անտառը: Այս-
տեղ նա մեծ դժուարութեամբ ապրում էր իր
կնոջ հետ, եւ ամեն տարի Աստուած նրանց
ուղարկում էր ընտանիքի մի նոր անդամ: Հա-
նաք է, ամեն տարի, երբեմն նոյն իսկ դաշ-
տային աշխատանքի ամենաթունդ ժամանակ

այնպէս ծանրանալ, որ գործելու համար ան-
պէտք դառնալ, իսկ յետոյ եկ և «քառասունք»
էլ պահիր: Յամենայն դէպս Աստուած հացով
այնքան առատօրէն չէր օրհնում այդ ընտա-
նիքը, որքան երեխաներով. եւ այդ էլ հակա-
ռակ քահանայի յուսադրութեան, թէ Սամա-
լաւայի ազգաբալը դեռ պէտք է ծաղկի, որով-
հետեւ այդտեղ աշխատաւորների մի ստուար
խումբ պիտի մեծանայ: Քահանայն առում էր նոյն-
պէս, թէ կանցնեն փորձի տարիները եւ ամեն
ինչ առատ կը լինի, որովհետեւ «Երեխաներ Ու-
ղարկողը հոգս է քաշում եւ նրանց գոյութեան
մասին»:

Դեռ մինչեւ այդ նրանց մասին հոգս էր տա-
նում Անին, որը առաւօտից մինչեւ գիշեր
գլուխ էր ձաքաղցնում, մտածելով անհրաժեշտ
պիտոյքները ձարելու նրանց համար որ եւ է
տեղից: Պերտուն իր կողմից ջանասիրութեամբ
վաշակում էր իր բաժին փոքրիկ կտոր հողը
եւ ամեն կերպ աշխատում էր մի քիչ օգուտ
ստանալ չրջապատող անտառներից եւ ձահիճ-
ներից: Սակայն չը նայած դրան, ոչ կինը եւ
նշ մարդը չէին կարողանում կարիքը ապարա-
կից հետո պահել:

Զիմանալով ինչպէս աղքատութեան աքացի
տալ, Պերտուն մի անգամ վճռեց իր հողի սահ-
մանը լայնացնել պետական անտառի հաշիւից:
Բայց դա մի շատ տխրաւ վարձուք էր, ինչ-
պէս նրան յետոյ բացատրում էր անտառապա-
նը, որովհետեւ «ծառերը եւ նրանց տակի հողը
չէ որ պատկանում են տէրութեան, այսինքն
հասարակութեան. միթէ դու այդ չես հասկա-
նում»:

Մեր ընթերցողներին յայտնի է, թէ մենք ինչ
հայեացք ունենք այս հարցի վրա: Մնդիրը,
մեր կարծիքով, պարզ է. դա այն է, որ հա-
սարակական գործիչը, լինի նա դերասան, զը-
րականագէտ, հասարակական պաշտօնի համար
ընտրված մէկը, չէ կարող խուսափել հասարա-
կական դատաստանից այն արատաւոր գործե-
րի համար, որոնց կատարում է իր մասնաւոր
կեանքի մէջ եւ որոնք ոտնակոխ են անում
հասարակական դադափաները: Այնուհետեւ
երկրորդական հարց է, թէ ուր եւ ինչպէս
պէտք է յայտնել դժգոհութիւն այդ տեսակ ա-
րարքների համար, թէ եւ չէ կարելի մի օրպէ
անգամ կասկածել, որ ամենայաւ տեղը հենց
այն ասպարէզն է, ուր ծառայում է գործիչը
հասարակութեան: Փաղաքակրթված, զգայուն
հասարակութիւնները այդպէս էլ անում են.
դերասանը, որքան էլ տաղանդաւոր լինի, չէ
կարող աշոգութիւն ունենալ, եթէ վատ մարդ է.
այսպէս եւ գրողը, պատգամաւորը, հասարա-
կական պաշտօնեան:

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Յ Ե Մ Ն Ի Գ

Կանանց շարժումը գրեթէ ամեն օր նոր
յաղթանակներ է տանում Ֆրանսիայում: Դի-
մադրական խմբերի սահմաններից դուրս գա-
լով, նա նորանոր կուսակցւորներ եւ համակրող-
ներ է գտնում ղեկավար չըջաններում:

Հանրապետութեան նախագահ Լուիս վեր-
ջերս ընդունելով ֆէմինիստական համաժողո-
վի պատգամաւորներին, իր բացարձակ վստա-
հութիւն է յայտնել ֆէմինիզմի ապագայի մա-
սին եւ ասել է, ի միջի այլոց, հետեւեալը.
«Կանայք ոչ թէ միայն ամենազօրեղ հասա-
րակական ոյժը են: Նա նրանցից չեն, որոնք կար-
ծում են, թէ «կանայք փոփոխում են»: Նա
համոզված են ընդհակառակը, որ նրանք աւելի
հաստատաւոր են, քան տղամարդիկ, եւ որ
շատ յաճախ, հակառակ երեւցածին, նրանք են,
որ ուղղութիւն են տալիս տղամարդկանց եւ
դէպքերին»:

«Les Droits de la Femme» թերթը, բերելով
Լուիսի այդ խօսքերը, ասում է, «Ինչպէս ե-
րեւում է, չուտով ամենքը ֆէմինիստ կը դառ-
նան եւ ոչ ոք չի համարձակի խոտոտվանել,
թէ կար ժամանակ, երբ ինքը ֆէմինիստ չէր»:
Նոյն թերթը հաղորդում է, որ նորերս Պատ-

«Զեմ հասկանում, ինչպէս մարդկանց երեւած,
առաւել եւս Անին ինչ եւ երեխաներին»,—մտա-
ծում էր նա:

Պերտուն փորձեց գործին քաղութեամբ վե-
րաբերվել: Զը նայած այդ որոշման, նա դան-
դաղացրեց իր քայլերը, երբ մտնում էր
խրճիթին:

«Գէթ Անին տանը չը գտնվէր,—սրտնեղու-
թեամբ մտածում էր նա:—Այն, կարծես, հենց
այդպէս է. երեւի Սիլվիայի հետ գնացել է
ուղևանը լինից դուրս հանելու. տես, մեր մա-
կոյնի էլ չէ երեւում... համ էլ երեխաները
բակում շատ են չարութիւն անում»...

Նա կանգ առաւ եւ սկսեց ակամջ դնել ե-
րեխաների ձայներին:

—Ահա քեզ կը դնեմ եղունգիս տակին, կը
տեսնեմ, թէ ինչպիսի մեղք ես:

Դա փոքրիկ Անտիի բարձրահնչիւն ձայնն
էր. նա բարկացնում էր միւսներին: Եւ իսկոյն
լսվեց Ֆոկոյի լալկան ձայնը. սա Անտիից երեք
տարով մեծ էր, բայց երբեք չէր կարողանում
նրա հախիցը դաւ: Ի հարկէ, պէտք է իսկոյն եւ
եթ տուն գնալ Բայց Պերտունին չափազանց
անտանելի էր թւում իր քերած գլխով երե-
խաներին երեւալով. կարելի է եւ վախացնել եւ
ինչու մի քիչ չը հանգստանալ հաճախեալ
տակին: Պերտուն նստեց եւ վառեց իր չիբուխը:

Երկար նա այստեղ նստեց. տխուր մտքերը
մէկը միւսի ետեւից դալիս անցնում էին նրա
գլխով. նա մտածում էր, ի միջի այլոց, թէ զուցէ
աւելի լաւ կը լինի բոլորովին ձեռք քաշել եւ
կրագործութիւնից, թողնել խրճիթը եւ քա-
ղաքում բնակվել: Զ՛ որ ասում են, թէ քա-

(Կը շարունակվի)

գանձվող ճանապարհորդներն անվտանգ են. մինչև անգամ բռնություն չեն թրջվել:

13 սեպտեմբերի

ԼՕՆԴՈՆ: Գոչն յայտնեց, թէ հրաժարվում է թեկնածութենից: Մօրլի դիմեց ընտրողներին մի յայտարարագրով, որի մէջ յարձակվում է գլխավորապէս կառավարութեան հարաւափրիկական քաղաքականութեան վրա եւ առում է, թէ հարաւ-ափրիկական հանրապետութիւնները կը դառնան նոր Իրլանդիա եւ աւելի վտանգաւոր, քան նախկինը: Այդ տիրապետութիւնը—ասում է Մօրլի—չի բերի Անգլիային ոչ պատիւ, ոչ օգուտ, բայց քանի որ պատերազմը հրատարակված էր արդէն՝ հանրապետութիւնների միացումը բրիտանական երկիրներին անխուսափելի էր:

ՆԻՒԻՐՈՒԿ: Այստեղ հրատարակված է հետեւեալ հեռագիրը Լոնդոնից. «Այսօր գերմանական զեւայան Գաղֆէլդի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ, Սօլբրիւրի յայտնեց համարեա նոյն խօսքերով, ինչ խօսքերով յայտնել էր ամերիկական կառավարութիւնը, թէ մերժում է ան առաջարկը, որ պարունակում է իր մէջ գերմանական յայտագիրը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Պաշտօնապէս հաղորդվում է, թէ գնեկալ Չաֆֆին հրաման է տուած պահել Պեկինում իր հրամանատարութեան տակ, խաղաղութեան բանակցութիւնների ժամանակ, ամերիկական զեւայանատան պահպանութեան համար, մի հետեւակ գունդ, հեծնախնդի չորս զորամասերը եւ մի թիկնաւորաց թիւղանօթախումբ: Մնացած զօրքերը կուղարկվեն Մանիլա:

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ: Այսօր, շահի անցնելու ժամանակ, աղքատիկ հագնված մի մարդ փորձ արեց խնդիր ձգելու Շահի կառքի մէջ: Նա ձերբակալվեց, բայց նրա անձնագրութիւնը յայտնի կացուցանելուց յետոյ, արձակվեց բանտից: Ժողովրդի մէջ այդ դէպքը մի քանի րոպէս քաղաքացիներ, որովհետեւ ենթադրութիւն ծագեց, թէ տեղի է ունեցել սպանութեան փորձ:

ՆԻՒԻՐՈՒԿ: Երէկ դեպքան Կոնքերին հեռագրով հրաման է ուղարկված ոչ միայն բանակցութիւններ վարել Չինաստանի հետ խաղաղութեան դաշնագրի վերաբերմամբ, այլ նաեւ առաջարկել ամերիկական կառավարութեան միջնորդութիւնը պետութիւններին եւ Չինաստանին: Սեպտեմբերի 18-ին ամերիկական զօրքերը կը հեռացնվեն Պեկինից, եթէ մինչ այդ ժամանակ զինուորական միջնորդութեան հրամանները կատարված կը լինեն գեներալ Չաֆֆիի կողմից: Զորս ապրանքատար նաւեր նաղաստիկից ուղարկվեցին Տակու աւերիկական զօրքերը Մանիլա տեղափոխելու համար:

ՏԵՆԶԻՆ: Լի-Պու-Չանգ մի քանի օրից յետոյ ուղեւորվում է Պեկին: Շատ զօրւար է ընդունելութիւն գտնել նրա մօտ: Մի խօսակցութեան մէջ նա յայտնեց, թէ հաւանական է համարում, որ հարցը չուտով վճով ազգերի բաղադրութեան պատճառով, որոնց հետ հարկ կը լինի բանակցութիւններ վարել: Նրա կարծիքով զօրքը չէ բարդվել Պէյթանի մարտիկների վրա տեղի ունեցած յարձակման պատճառով:

Խճաքիւր: ԱՆԷՔՍԱՆԴՐ ՔԱՆԵՐԱՐ Հրատարակիչներ: ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱԶԱԿ ՄԷԼԻԻ-ԱՆԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ Պ Ր Ո Յ տիկ. Կատ. Հիսիցեանցի

Երկու սեռի մանուկների համար: Միտեղ պարագայում իր հարազատ երեխաների հետ: Ընդունելութիւնը սահմանափակված: Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն: Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհլուքեան փողոց (Նախկին Սաղօվայա), սեփ. տ. № 29: (ԵՂ.) 26—25

Բժիշկ Գ. Մեհրաբեան

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ առանցների հիւանդութիւնների բժշկութիւնը: Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7 1/2 ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելյամինովսկայ փող. տ. Գարուշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Барташянъ]. 8—25

ՄԻ ՈՒՍՈՒՑՁԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ընդունում են հասցիւթաւոր գիշերօթիկ աշակերտներ (пансионерами) կրկնութեամբ, առեւտրական եւ այլ միջնակարգ դպրոցների համար: Հասցէ՝ Графская улица, № 10, домъ Элизовая. 6—6

Մի ուսուցիչ, որ աւարտել է բէլ-լական դպրոցի VII դասարանից եւ մասնագիտօրէն ուսումնասիրել է գերմաներէն, ֆրանսերէն եւ լատիներէն լեզուները, կամենում է պատրաստել կամ կրթչնդութեամբ պարագել բոլոր միջնակարգ դպրոցների աշակերտներին հետ: Հարկաւոր դէպքում կարող է տալ եւ երաշխաւորութիւն: Հասցէ—Елисаветинская, 71. правый подъезд. 1—2

Ընկերութիւն
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Ատամի հեղուկ—
ԷԼԵԿՍԻՐ
ՍՍԱԼՕԷ
Ամենաճոր ախտահանական միջոց:
Մօակվայի Բժշկական Վարչութիւնից
Թող տուած՝ որպէս մի միջոց, որ չէ պահակում իր մէջ առողջութեան համար
որ եւ է վնասակար նիւթ:
ՍՐՈՒԱԿԸ 75 ԿՈՊԵԿ
(ամ. 10) 1—10

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲժԻՇԿ ՆԻԿ. ԿԱԶԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ. 5—7 ժ.: Երեւանեան հրապարակ. տ. Խաղաղութեան. РОИВОВЪ-Իրաւանկարչական գործարանի տակ: Ծրиванская площадь, домъ Харазова. (Ե. հ. չ.) 9—25

Նոր բացված
Դ Պ Ր Ո Յ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
Մ. Մ. ԿԱՐԱՍՏՈՒՐՉԵՒ
Աշակերտութիւնների ընդունելութիւն սեպտեմբերի 1-ից ամեն առաւօտ ժամի 10—12: Պարագլուխները կը սկսվեն սեպտեմբերի 11-ից: Սօլբալի. Լիւթմուսովսկայա (Նախկին Նաղօր-նայա), № 27, տ. Շառխարանի: 5—5

Մ. ՄՈՒՐՏԵԿ
վերականգնողական լեզուի դասերը. երաշխաւորում է արտասանութեան կանոնաւորութիւնը. նշանաւոր գիշերում է անում մի քանի աշակերտներին միասին—իր բնակարանում: Մաղաւթովսկայ փ. № 4. 5—5

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ

ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
գիշերօթիկ աշակերտներ
Ներսիսեան, քաղաքային եւ ծխական դպրոցներից, որոնց հետ պարագայում եւ կրկնութեամբ: Հարցնել Ներսիսեան դպրոց, Դաւիթ Տէր-Դաւթեանին: 6—6

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
Բ Ե Գ Ի Ո Ւ Մ
Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայաց գիմնազիայի, բէլական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար: Մանկական պարտէղի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէզերեան սիստեմով: Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսա-գիշերօթիկ երեխաներ: Մանկական պարտէղի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կը լինի է ստանալ օգոստոսի 20-ից, Բաղուշ. 10—10

Լոյս տեսաւ
ԿԱՄԻԼ ԶԼԱՄՄԱՐԻՕՆԻ
Ո Ւ Ր Ա Ն Ի Ա
առողջապահական վեպը
Թարգմ. ֆրանս. Ն. ԱՌԱՔԵԼԵԱՆ:
Գիրքը տպված է լուս. եւ չեղի թղթի վրա, 376 երես, միջակ գիրքով եւ արժէ 1 ր. 50 Կ. Դիմել՝ Тифлисъ, Г. Галустьянцу, Лорис-Меликовская, № 11. 3—10

ՀԱՇՈՒՍՊԵՏՈՒԹԵԱՆ գաղութացի XI շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆՄԵԱՆ
Հեղինակ «Չեռնաբլի առեւտրական եւ գործարանական հաշուապահութեան ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»-ի
Սրկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, եւ երաշխաւորում լանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՍՏՈՒՆՔԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենաին առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական եւ կերտային գործարանական հաշուետեւութեան:
Բ) Առեւտրական թուարանութիւն:
Գ) Առեւտրական նաւակադրութիւն:
Դ) Գեղարարութիւն եւ ամենամատ ձեռքերի ուղղելը:
Պարագլուխները սկսվելու են 1900 թ.ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար չարունակվելու են իւրաքանչիւր 20ՐՍ ամսից յետոյ: Իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագլուխներ:
Ցանկացողները թող գրեն զրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչ 6 ժամ երեկոյեան, Կ Ո Ւ Կ Ի Ա, Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Николаевская ул. № 46):
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Նիկոլայեւսկայա փող. եւ Ռուսաստանի բոլոր յարմարի գրաւածագողներում: Գինն է 3 ր. 50 Կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են գրանցել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու:
(Ե. հ. չ.) 22—30

Դ Պ Ր Ո Յ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԵՆՆԻ. ՅՈՎԱԶԱՆՉԱՆԵԱՆ)
Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիոն, բէլական, վաճառական եւ այլ միջնակարգ դպրոցների մանկու համար: Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից:
Մանկական պարտիքում ընդունվում են 4 տարեկանից:
Садовая [Безутовская], домъ Шадинова, № 38. 9—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅՈՒՄ
վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եզնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ:
I. Առաջին գրքից, պատրաստականների համար. „ԱՂՈՒՔՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“:
Գ. տպագր. Գինն է 20 Կոպէկ:
II. Երկրորդ գրքից, Առաջին դասարանի համար. „ՀԻՆ ՈՒՅՏԻ Ս. ՊԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“ (Նոր հրատարակութիւն): Գինը 30 Կ. (Ե. հ. չ.) 8—10

Ս ա ր գ ի ս Վ. Ա ր ր ա ի ա լ ե ա լ
Հասցէ. Սօլբալի, Դանովսկայա փող. տ. Թամաշեղի, № 26, բն. № 9.
Մոլորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագլուխներ գտնելու համար:
ՀԱՇՈՒՍՊԵՏՈՒԹԻՒՆ
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով:
2) Առեւտրական թուարանութիւն:
3) Առեւտրական թղթայինութիւն:
4) Գեղարարութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրթանների եւ ուղղուն ամենամատ ձեռքերի:
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան:
(չ. ո. չ.) 2—14

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ
ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՒՔ ՈՒՍՄԱՆ ԵՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՒ ԳԻՄՆԱԶԻՍԻ ԵՒ ԲԵԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ:
Ընդունում է եւ պատրաստում աշակերտներ գիմնազիայի, բէլական ուսումնարանի, կարճատեղի կորպուսի մինչեւ հինգերորդ դասարան, նոյնպէս առեւտրական, երկրագիտական եւ այլ ուսումնարանների համար:
Առաջին բաժանումում քուլմ երեխաներ ընդունվում են առանց քննութեան:
Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հմուտ մասնագէտ մանկավարժներ:
Հասցէ՝ Թիֆլիս, Դանովսկայա, № 11 (Երրորդ գիմնազիայի մօտ): 4—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:
Եւ հալաւակը՝ Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 սեպտեմբերի ԱՆԱՏՈՒ չորեքշաբթի, նաւագետ ԲԻԱՆԿԻ: Եւ պապէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օդորակներից պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպոլիսի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՐՈՅԻՆ, Նաբէրէժնայա ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկեհանեանին, Սոնի փող. Խոջափարուսովի եւ Մայսարուձէի բարձրագոյն: ԲԱԳՈՒ—Եղը. Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն հրապրիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄ—ՍԻՅՈՎ—Վաղդիկաւագի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 12—20